

**ՉԱՅՈՑ ԳՐԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՑ**

Ժողովուրդների կյանքում լինում են իրադարձություններ, որոնք ճակատագրական նշանակություն են ունենում նրանց ողջ պատմության, նրանց բուն իսկ գոյության համար: Այդպիսի մեծ ու կարևոր իրադարձություններից մեկն էր գրեթե գյուտը հայ ժողովրդի պատմության մեջ: Բաժանված երկու իրար հետ մրցող պետությունների միջև, եկեղեցու կողմից ենթարկված ասորական ազդեցության, ծանր իրավիճակում էր գտնվում հայ ժողովուրդը: Եվ ահա այդպիսի ծանր պահին գտնվեց Մեսրոպ Մաշտոց անվամբ մի լուսամիտ մարդ, որը իր ժողովրդի կյանքում ստեղծված անհրաժեշտության թելադրանքով, արքունիքի ու եկեղեցու՝ նույն անհրաժեշտությամբ պայմանավորված աջակցությամբ, ձեռնարկեց և ստեղծեց հայկական գիրը: Մաշտոցը չուզեց հետևել ոչ մի այբուբենի և հնարեց առանձին տառաձևեր, աշխատելով նույնիսկ հեռանալ բնատիպ ձևերից, որպեսզի թաքցնի նույն տառերի ծագումը կամ աղբյուրը: Թերևս այստեղ կար նաև որոշ քաղաքագիտություն. այն է՝ խորթ չերևալ պարսիկ, հույն և ասորի ազգերին, եթե սրանցից մեկնումեկի այբուբենին հետևած լիներ: Ինչպես տեղեկանում ենք աղբյուրներից Մաշտոցը հայոց գրերը ստեղծեց ասորական Եղեսիա քաղաքում և կատարելագործեց Սամոսատ քաղաքում: Մաշտոցի կենսագիր Կորյունի վկայությունից՝ «Եւ անդ վաղվադակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ»՝ տեղեկանում ենք, որ Մաշտոցն ինքը կարգավորել, այսինքն՝ դասավորել է իր ստեղծած նոր նշանագրերը: Արդ՝ երբ մեր այբբենարանի մեջ տառերի կարգը համեմատում ենք հունական ալֆաբետի տառերի դասավորության հետ, երկուսի մեջ ևս նույն կարգն ենք գտնում, միայն հայերենին հատուկ ավելի հնչյունների համար տեղ-տեղ առանձին գրեր կան նույն շարքի մեջ: Բացի այդ՝ հայերենի ՈՒ հնչյունի համար մեր այբբենարանի մեջ չկա հատուկ նշանագիր: Գրության մեջ այդ պարզ ծայնավորը Մաշտոցն արտահայտել է ու երկտառով՝ հետևողությամբ հունարենի օՎ երկտառին: Մաշ-

¹ Կորյուն, Վարդ Մաշտոցի, Երևան, 2005, էջ 50:

տոցը հետևել է հունական ալփաբետին, որին ինքը վարժ է եղել մանկությունից: Նա ինքն է անվանել տառերը՝ այբ, բեն, գիմ, դա և այլն: Նա է գրել տառերը: Դա վերաբերում է տառերի արտաքին ձևին, գծագրությանը. «հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ և սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին»¹, այսինքն իր աջով գրեց, գծեց: Ինչպես տեսանք Կորյունն այդ նշանագրերը սքանչելի բառով է բնորոշում, որը վերաբերում է ոչ թե տառերի արտաքին ձևին, այլ ալփաբետի կատարելությանը: Մաշտոցի ժամանակի գրերից և ոչ մեկը բավական չէր հայոց լեզվի բոլոր հնչյունական հարստությունն արտահայտելու համար: Դանիելյան նշանագրերը նույնպես թերի էին դուրս եկել: մինչդեռ Մաշտոցի գրերը կատարելապես հարմարեցրած է հայերենի հնչյունական սիստեմին: Դրանով անհամեմատ ավելի հեշտացած է եղել հայերեն գրել-կարդալու գործը, որովհետև «Մեսրոպյան նշանագրերը» (այսպես անվանել է Մովսես Խորենացին) հիմնված են կատարյալ հնչյունական սկզբունքի վրա, որ է՝ ամեն հնչյուն իր առանձին տառը պիտի ունենա և ամեն տառ մեկ հնչյունի արտահայտիչը պիտի լինի: Բացի այդ, ըստ Կորյունի տեղեկության Մաշտոցը «յօրինէր սիղոբայիւք»² կապօք³, այստեղ «կապ» բառը թարգմանություն է հունարենի «սիլլաբե» (սիլոբա) բառի: Կորյունը պատմում է, թե Մաշտոցը նոր նշանագրերը նշանակելուց, անվանելուց և դասավորելուց հետո, այդ նշանագրերը «հորինում է սիզոբաներով-կապերով»: Այդ նշանակում է, որ Մաշտոցն առանձին նշանագրերի գործը վերջացնելուց հետո՝ ամբողջապես նույն նշանագրերը հորինել է «կապերով», վանկերով: Նա հորինել է կարդալ սովորեցնելու դասագիրք, նա հայոց լեզվի առաջին ուսուցիչն էր և բնականաբար նա էլ առաջինը պիտի հորիներ առաջին այբբենարանը՝ իր նշանագրերը «կապերով» կարդալու, կամ «գիրկապ» կարդալու համար⁴: Սակայն Մաշտոցը չբավարարվեց այդքանով. Կորյունը գրում է. «Եւ անդէն ի նմին քաղաքի գրիչ ոմն հելլենական դպրութեան Դոսփանոս անուն գտեալ. ըրով զամենայն ընտրութիւնս նշանագրացն զնրբագոյնն և զլայնագոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն յօրինեալ և յանկուցեալ»⁵, այսինքն Մաշտոցը Եղեսիայից իջավ Սամոսատ քաղաք, որտեղ գտավ հելլենական դպրության մի գրագիր՝ Դոսփանոս անունով, որի ձեռով նշանագրերի, բոլոր զանազանությունները՝ բարակն ու հաստը (նուրբն ու լայնը), կարճն ու երկայնը, առանձինն ու

¹ Նույն տեղում:
² Դունարեն «συλλαβαν» բայը նշանակում է լատիներեն colligo՝ միացնել, իրար կապել: Դրանից է «συλλαβή» բառը, որ նշանակում է իրար միացում, կապում, ուստի և վանկ: Տե՛ս Աճառյան Դ., Դայոց գրերը, էջ 501:
³ Կորյուն, էջ 50:
⁴ Տե՛ս Արեղյան Մ., հ. 9, Երևան, 1968, էջ 638:
⁵ Կորյուն, էջ 50, 52:

կրկնավորը ամբողջապես հորինեց ու վերջացրեց: Այդ մասին վկայում են նաև Խորենացին և Փարպեցին. «Եստեղծ զնշանագիրս մեր հանդերձ Դոսփանոսիւ, կերպածնեալ զգիրն Մեսրոպայ առձեռնպատրաստ փոխադրելով զհայերէն աթութայսն ըստ անսայթաքութեան սիւղաբայից հելլենացուց»¹, սրա հետ նույն է. նաև Փոքր Կորյունը. «Փոխադրելով ըստ հայերէն ըստ անսայթաքութեան սիղոբայից հելլենացուց»²: Որ Մաշտոցը Սամոսատում դիմում է հելլենական դպրության մի գրագրի օգնության, այդ ցույց է տալիս, որ նա բավարար չի համարել իր գտած տառերի արտաքին ձևը, գծագրությունը: Նա հարկ է տեսել, որ իր նշանագրերը հարմար լինեն նաև գրության, զեղագրության նկատմամբ, այն էլ հունական տառերի հետևողությամբ, ձախից դեպի աջ գրությամբ: Դրա համար նա իրեն ձեռնհաս չհամարելով, դիմել է մի հույն գրագրի (որ երևի իր ժամանակին հայտնի գրագիր է եղել), և ոչ թե Եղեսիայում ասորական դպրության մի ասորի գրագրի: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ

ա) Մաշտոցն այն հույն գրագրի օգնությամբ վերջնապես հորինել է «նրբագույնն ու լայնագույնը», նշանագրերի նուրբ ու լայն, բարակ ու հաստ մասերը, կողմերը, այսինքն՝ թե տառերի ո՛ր կողմերը, ո՛ր մասերը հաստ կամ բարակ պիտի լինեին, որպեսզի և՛ զեղեցիկ, և՛ հարմար լինեին գրելու:

բ) Մեսրոպյան նշանագրերի մեջ, մեր հին երկաթագրից դատելով, չկան «կարճ ու երկայն նշանագրեր», բոլորն էլ միաձավասար են: Բայց կան առանձին նշանագրերի մեջ ինչպես հաստ ու բարակ, նույնպես և կարճ ու երկայն մասեր: Ուստի Կորյունի գրածը, թե Մաշտոցը հույն գրագրի ձևով հորինել է կարճն ու երկայնը, պետք չէ հասկանալ «կարճ ու երկայն նշանագրեր»:

գ) Մաշտոցը հույն գրագրի օգնությամբ հորինել, վերջացրել է «զառանձինն և զկրկնաւորն»: Մեսրոպյան նշանագրության բոլոր 36 տառերն էլ առանձին են, այսինքն ջոկ, մենակ, զատ-զատ են, իրենց հատուկ մեկ առանձին հնչյունով, մեկ տառ մեկ հնչյունի արտահայտություն կամ մեկ առանձին հնչյուն մեկ առանձին տառով արտահայտված (այստեղ կարելի մեջ բերել Դ. Դիրինգերի խոսքերը. «Այբուբեն ստեղծելու գործում գլխավոր նվաճումը եղել է ոչ թե նշանների գյուտը, այլ զուտ այբուբենային կարգի ներդրումը, որտեղ յուրաքանչյուր հնչյուն արտահայտվում է միայն մեկ նշանով»): Բայց կա նաև ու հնչյունը, որ չունի իր առանձին նշանագիրը. դա արտահայտված է երկու տառի միացումով: Դա, այդ կրկնատառը, «կրկնաւոր» է, կամ «կրկնայար», այսինքն՝ երկու տառի «յարում», կցում, միացում: Մաշտոցը Սամոսատում հույն գրագրի ձեռով հորինել, վերջացրել է «առանձին» նշանագրերի

¹ Մովսես Խորենացի, Դայոց պատմություն, Երևան, 1981, Գ. ծգ:

² Փոքր Կորյունը, Վարդ Մաշտոցի, Երևան, 1979, էջ 30:

գծագրությունը, նրանց հաստ ու բարակ, կարճ ու երկայն մասերը և առանձին տառերի ձևն ընդհանրապես, գույցե և շատ բան փոխելով եղեսիսայում իր «նշանակած», նախագծած ձևերից: Քանի որ ըստ Կորյունի գրի «կրկնաւորը» կամ «կրկնայարն» էլ հորինել, վերջացրել է այն գրագրի ձեռով, կնշանակի նրա ազդեցությունը եղել է նաև նկատմամբ ու ձայնավորի «կրկնաւորը» կամ «կրկնայարն», այսինքն երկտառ գրության, որ, ինչպես վերևում ասվեց, կատարվել է հունարենի օջ երկտառի հետևողությամբ: Բայց թե կոնկրետ ինչ է եղել առանձին տառերի գծագրության նկատմամբ այս «գրիչ» Հռոփանոսի ազդեցությունը, այդ մասին ոչինչ չենք կարող իմանալ:

Շարունակելով հայոց գրերի ստեղծման պատմությունը՝ նշենք, որ որևէ այբուբենի ստեղծման համար առաջին հերթին անհրաժեշտ է որոշել գրության ուղղությունը, որ ինքնին պայմանավորում է նաև այբուբենի մի քանի ուրիշ առանձնահատկություններ: Իսկ գրության ուղղություն ասելով հասկանում ենք այն հանգամանքը, թե արդյոք գրերը իրար հաջորդած ժամանակ՝ նրանց ընթացքը աջից դեպի ձախ է ուղղվում (ձախընթաց), թե ձախից դեպի աջ (աջընթաց), կա նաև վայրընթաց ուղղությունը (վերևից դեպի ներքև գրություն)¹: Այն ժամանակ, երբ Մեսրոպը հետամուտ էր ստեղծելու հայոց գրերը, հայերը երեք լեզու էին գործածում՝ ասորերեն, պահլավերեն և հունարեն: Սրանցից առաջին երկուսը աջից ձախ էին գրվում, միայն հունարենը ձախից աջ էր: Մեսրոպն ընտրեց աջակողմյան գրությունը, որ ինչպես հայտնի է գրի ընդհանուր պատմությունից ու տեսությունից, առավել հարմար էր և ներկայացնում էր գրի զարգացման ամենաբարձր աստիճանը: Բացի այն հանգամանքից, որ նա առավել հակված էր հունական քաղաքակրթությանը, կապ ուներ նաև այսպես կոչված գրի սիստեմը: Ավելի պարզ ասած այբուբենի մի մասն ունի գրության այսպես կոչված կցողական (պահլավերեն ու ասորերեն) սիստեմ, իսկ մյուս մասը՝ անջատական (հունարեն) սիստեմ²: Մեսրոպի համար, ուրեմն, գրության ուղղությունն ու սիստեմը սերտորեն կապված էին իրար հետ և մեկի ընտրությամբ պայմանավորված էր նաև մյուսը: Այս էր ահա գլխավոր պատճառը աջընթաց ուղղությունն ընտրելու, որով լուծում էր նաև գրության սիստեմի հարցը: Ուստի կարելի է ասել, որ մեսրոպյան գրերի երկու առավելություններն են աջընթաց և անջատական գրությունը:

Հայոց գրերի ուղղագրությունը քննելիս պետք է նաև նկատի

¹ Տես Աճառյան Հ., Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 497-498:

² Կցողական գրի առանձնահատկությունն այն է, որ յուրաքանչյուր տառ կամ գոնե տառերի մեծագույն մասը, ունի չորս ձև՝ ամեն մեկը մի դիրքի համար (առանձին, բառասկզբում, բառամիջում, բառավերջում), իսկ անջատական գրության ժամանակ տառերը անջատ-անջատ իրար մոտ շարվում են, առանց դրանք որևէ փոփոխության ենթարկելու:

ուենանք այն հանգամանքը, որ հին այբուբեններից շատերը, այդ թվում նաև հունարենը, ունեին զանազան կարգի նշաններ, որոնք գործածվում էին տառերի ճիշտ արտասանությունը ցույց տալու համար: Դրանք տառերի վրա դրվող եռանկյունաձև նշաններ, շեշտի զանազան տեսակներ են և այլն: Իսկ Մեսրոպն իբրև սկզբունք ընդունեց չունենալ այդպիսի նշաններ և իր հորինած գրի մեջ ոչ մի այդպիսի նշան չենք գտնում: Դա նշանակում է, թե մեսրոպյան այբուբենը ինքնին արդեն լիովին արտահայտում էր հայերենի բոլոր արտասանական առանձնահատկություններն առանց լրացուցիչ նշանների: Գրերի ստեղծման ժամանակ Հայաստանի բոլոր գավառներում բացարձակապես միատեսակ հայերենով չէին խոսում. պետք է ենթադրել, որ զանազան գավառների խոսվածքներում կային արտասանական ինչ-ինչ տարբերություններ: Սակայն մեսրոպյան այբուբենն արտահայտում է ոչ թե հնչյունական տարբերակներ, այլ դրանց ընդհանրությունները՝ հնչույթները, իսկ սա նշանակում է, թե այդ այբուբենը, ժամանակակից տերմինով ասած, հնչույթաբանական այբուբեն է: Այս ամենը ահա այն հատկանիշներն են, որոնք բնորոշում են մեսրոպյան գրի կատարելությունը: Ուստի Մեսրոպն իր աջև նպատակ էր դրել ստեղծել հայկական գիր և առաջնորդվել է մեկ գլխավոր սկզբունքով՝ հորինել ինքնատիպ, միայն հայերենին հատուկ գրեր, որը նրան անշուշտ հաջողվեց, և որը դարերի ընթացքում, թեև ենթարկվեց զանազան փոփոխությունների, սակայն մինչ օրս էլ պահպանում է իր կատարելությունը ու ինքնատիպությունը:

Annotation

Mesrop Mashtots had an aim to create original alphabet for Armenians and for sure, he did his best to realize his program perfect. Later the alphabet was a bit changed, but it's continuing to be perfect and unique.

Аннотация

Месроп Маштоц поставил перед собой цель создать оригинальный алфавит для армян, чье емы конечно же удалось. Она в дальнейшем подвергалась изменением, но несмотря на этого остается совершенной и сомообразной.